վարդապետի աշակերտեալ էինք ի տղայութենէ, հասակից (s!) եւ ի պնակիտ»։ Դանիէլ վարդապետը միաբանելով Ամենափրկչին, բացի այս գրքից, «մեծաւ յուսով եւ փափաքմամբ սիրով, ձեռն էարկ զսբ̃ եւ երկնանման եւ փառաւոր կաթուղիկէ եկեղիս։ Եւ վերստին կրկին զարդարեաց եւ սալեց եւ նորոգեաց»։ Գրիչը խնդրում է յիշել «զմիեղէն սբ̃ եղբարքս սբ̃ Ամէնափրկչիս զտր̃ Սարգիս փակակալ, զտր̃ Յակոբ, զտր̃ Մաթէոս եւ զսիրասնունդ որդիքս մեր եւ հոգեւոր աշակերտքս կուսակրօն սբ̃ քահանայքս. զկազմաւղ սորա զտր̃ Յով..(անէս?) եւ զտր̃ Յոհաննէս, որ բազում երախտիք ունինք. սիրով եւ հնազանդութբ̃. զտր̃ Անդոն, զտր̃ Աւետիք, զտր̃ Դաւիթ, զտր̃ Ղազար, զտր̃ Ղուկաս զտր̃ Մանուէլ, զտր̃ Աբրահամ» (1)։

Զաքարիայի յաջորդն էր Յովհաննէս եպիսկոպոս. Մատթէոս գրիչը Եղվարդում գրած իր Աւետարանը թուագրում է ժամանակի Սրբատակէս կաթուղիկոսի հետ և «Տէր Յովանէսի Հայոց Թառոյ» եպիսկոպոսութեամբ, «ի վերակացութե երկրիս պարոն Վիչեւի, ի մեծ թուականիս Հայոց ՋԺԴ (= 1665)»։ Այս Մատթէոս գրիչը, կարծում ենք, նոյն է N 4435 ձեռագրի ստացողի հետ, որով և հասկանալի Եղվարդում գըրուած աւետարանի թուագրութիւնը Հաւուց Թառի եպիսկոպոսի անունով. պարոն Վիչեւը, հաւանօրէն, Զաքարեան իշխաններից էր և ոչ Պահլաւունիներից (2)։ Յամենայն դէպս Մատթէոս գրիչը գործել է այս շըրջանում։ Գեղարդում կամ Այրիվանքում գրել է նա մի Յայսմաւուրք, որի լուսանցքների ճարտարապետական, պատկերագրական և կենդանագրական նկարչութիւնը նորա գեղարուեստական ունակութեան ակնյայտնի ապացոյցներ են, իսկ իբրև գրիչ՝ ժամանակի լաւագոյն վարպետներից մէկը, որի մասին գաղափար կարելի է ստանալ Ալիշանի տուած մի նմանահանութիւնից (1)։ Յովհաննէս եպիսկոպոսն էլ նոյն պիտի լինի 1424 թուի յիշատակարանի «տր̃ տր̃ Յովանեսի» հետ, որ այդ ժամանակ դեռ քահանայ էր։

Մահդասի Ստեփանոսը «ի թվ. Ջ եւ Ի (=1471) եւ ի վշտաշատ ժամանակի, ի խանութե Ուզուն Հասանին եւ ի հայրապետութե տն̃ տր̃ Ըրստակէս կթ̃ղի եւ ի սբ̃ յաթոռն էջմիածին ի յերկնահանգէտ եւ ի սբ̃ ուխտս Հայոց Թառ սբ̃ Ամենափրկչիս, որ է պատկեր տն̃ մերոյ Յի̃ Քի̃ի, գրում է մի աւետարան (2)։

Յովհաննէս եպիսկոպոսի յաջորդը պիտի լինի Զաքարիա Բ., յիշուած ՋԼԶ (= 1487) թուին, որին Սիմէոն կաթուղիկոս սխալմամբ նոյնացնում է նախընթաց Զաքարիայի հետ, որ ընդարձակ կալուածներ է գնել հինգ հազար ոսկիով, ոմն մահմեդական Ամիրքեամալ Աբգինբէկից (3). իսկ ժամանակակից (1482 թ.) փակակալ սուրբ Ամենափրկչին՝ էր Խաչատուր աբեղան, նախկին Սարգիս փակակալի հոգեւոր որդին և յաջորդը (4)։

Նոյն Սիմէոն կաթուղիկոսի կալուածագրերի քաղուածքներից երևում է, որ 1526–1577 թուականներին վանքի առաջնորդներն էին Համազասպ և Զաքարիա, Պահլաւունեաց ցեղից, ինչպէս և նախընթաց եպիսկոպոսները (5)։

Գրիգոր գրիչ «ի թվ̃կնիս Հայոց ՋՂԲ (= 1543)» գրել է ժողովածու մի ձեռագիր, ի միջի այլոց և Յակոբ Ղրիմեցու տումարի մեկնութիւնը, սկսուածքը «ի յանեղաչէն եւ ա̃ծարնակ գիւղն Քանաքեռ եւ կտ̃րուն եղեւ ի մեծ մենաստանիս Հայոց Թառա, ընդ հովանեաւ Ամենափրկչիս և սբ̃ Ա̃ծածնին (6)»։

(1) Ձեռ. էջմ. N 3759 (Յիշատակարանը տե՛ս (Յաւել. 6), Թուղթ բամբակի, թերթ 942. շատ լաւ բոլորգիր։ Սկզբից պակաս տաս թերթ։ Ունի երկու մեծ սկզբնազարդ. բազմաթիւ լուսանցքի զարդեր՝ երբեմն եղջերու, թռչուն. (նաեւ օձ բռնած), պարիկ, մարդկային ֆիգուրներ. թեւաւոր կենդանիներ եւն։ Նկարիչն ու գրիչը նոյն անձն է, 202բ–203ա ներքեւի լուսանցքի փոքրիկ յիշատակարանի համեմատ. գրել է «տկար անձամբ», «ի դառն եւ ի նուրբ ժամանակի ի մէջ այլազգեաց» (222բ–223ա)։ Աստուածածնի փոխման տօնը նշանակելով «հոկտ. ժե» «կիրակի առաւաւտուն». ներքեւի լուսանցքում. «մահտարաժամ եղեւ եւ զտղայքն տարաւ եւ աչս կուրացաւ. եւ .գ. ճարիբ ի Գառնոյ»։

(2) Փիրդալէմեան. Նոտարք. 221։

(1) Ձեռ. էջմ. N 1005 նց.։ Ալիշան. Այրարատ. 198։ Տե՛ս եւ մեր Ազիբէկենր. Բանբեր Հայաստ. Գիտ. Ինստիտուտի. 1921–1922. Ա. եւ Բ. 196–197։

(2) Ձեռ. էջմ. N 251|215 (Կար. 244) Յաւել. 7։

(3) Ջամբռ. 277։

(4) Ալիշան. Այրարատ. 357։ Գուցէ այս Զաքարիայի յաջորդն էր ԺԵ. դարի վերջին եւ ԺԶ.ի սկըզբում վերոյիշեալ «Նաթանայէլ եպիսկոպոս Հայոց Թառայ»։

(5) Ջամբռ. 277։

(6) Ձեռ. էջմ. N 925 նց. (Յաւել. 8)։